

տաւորեց՝ երեկոյն տեղի տուեց մէկ պայծառ դիշերի եւ այս ժամանակ ամբողջ Փարիզը իւր 300000 նոր հիւր եկած օտարականներով, անթիւ կառքերով կգբօսնէր շրայուցիչ հրաւառութեան մեջ:

Հետեւեալ օրերը մեծ բազմութիւն կայցիւէր Աշխարհահանդէսին. որոց միջին թիւը 30000 հոգիի կհասնի. սոցամուտքին համար վարձք շատ մեղմ՝ նըշանակուած է. ով որ ամբողջ Աշխարհահանդէսին համար մտնելու իրաւունք պիտի առնէ՝ մէկ անգամէն 100 ֆրանսի կվճարուի. իսկ առօրեայ մուտքի գինն է մէկ ֆրանսի, որ կիրակի օրերը աւելի եւս պիտի թեթեւանայ, եւ թերեւս բոլորովին անվարձ լինի:

Մի քանի խօսք եւս: Աշխարհահանդէսի տեւողութեան ժամանակ Փարիզում ուրիշ միջնադրային եւ ազգային հանդէսներ տեղի կունենան: Սոցա գլխաւորն է Գրականական ժողովը, որին

մասնակցելու կանչուած են ամեն ազգէրեւելի մատենագիրները. այս ժողովին պիտի նախագահէ Վիկտոր Հիւգոյ, ուր այս մեծ սգին ընդարձակ տտենարանութիւն մի եւս պէտք է անէ. Երկրորդն է Պոչտի եւ Բուսարանութեան ժողով, որին պիտի նախագահէ Բրազիլիայի Կայսրը — Գոն Պետրոյ, լինելու է նաեւ Գպրոցական ժողով, որտեղ պիտի քննուին մանկավարժական ձեւեր, դասագիրքների ոճեր եւ ամեն բան՝ ինչ որ գպրոցին կվերաբերի. կատարուելու է Վոլաէրի հարիւրամեակը, որի կազմուելուն պարագլուխ է Գաղղիայի արգի երեւելի ճարտասան եւ քաղաքագէտն Գամպետայ. Սոցանէ դատ Եղիսեան դաշտում բացուեցաւ մայիսի 15ին ամեն տարիի սովորական ճարտարարուեստների պալատը — Սալոնը, ուր հանդէսի կգրուին երեւելի պատկերներ, արձաններ եւ փորագրութիւններ:

Մ Տ Ե Փ Ա Ն Ո Ս Խ Ա Լ Ի Ա Ս Ե Ա Ն Ն Ծ .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Ր Ն Ե Ր Կ Ն Ի Յ .

(Ի Վ Է Ի Դ Դ Դ Զ Է Ի Դ Դ Դ Է)

24. Եւ Տէր տնդաց ի Սողոմ եւ ի Գոմոր ժողովք եւ հուր ի Տեառնէ յերկնից:

25. Եւ կործանեաց զբողոքսն զայնոսիկ եւ զամենայն կողմանս եւ զամենայն բնակիս քաղաքացն եւ զամենայն քոյս երկրին: ԵՆԱՆՈՅՂԻ:

Ա.

Պ որ սրբանայս նըշմարէք, ամպրոպ ի տես թրխպագոյն,

Մ երթ փառահեղ ի տեսիլ, հրաշէկ երբեմն և արժգոյն,

Մ ըռայլ՝ զինչ ամառն ի բերոց թափուր:

Ի թևս հողմոց զիշերոյ անասնել խակ թուռի համակ,
 Թե՛ մըղիցի ծուխ սաստիկ՝ և ապշոպ աղմուկ բովանդակ
 Վաղաքի ուրեք, կիզելոյ ի հուր:

Յերկնից արդեօք, ի ծովէ՞, թէ ի լեռանց զիմեալ գայ.
 Եցէ՞ այս կառք հըրեղէն, որ զջօկ դիւաց ամբառնայ
 Ի լուսաւորաց գաւառ մերձաւոր:

Ո՛վ արհաւիրացս, ո՛ւստ՝ իցէ, զի կայծականց շանթ ահեղ
 Երբէք երբէք ի ծոցոյն՝ զինչ գալարուն օձ կարշնեղ՝
 Ճայթէ յանդընդոցն — վի՛հ՝ խորհրդաւոր:

Բ.

Օ՛րով . համայն ծո՛վ ընդ հանուր, ալիք, անդրէն ալեաց շար.

Ի գուր թըռչուն պարտասէ ըզթըռիչս իւր ապիկար —
 Ելիք են աստուստ և անդուստ կոհակք:

Հանուր ալիք անսահման՝ նդ ալես մըխին, հարկանին.

Օւալիս և եթ փրփրադէզ նըշմարէ ակն յանդընդին,

Յորում ընթանան ծրփանք անատակք:

Չրկունք երբէք մեծամեծք ջուրց յըզբօսանս մինչ կայտուն՝

Երծաթափայլ անդ լուղակքն հանդէպ ցոլեն արեգին,

Կամ լայնշի տըտունք յերկնային ի գոյն:

Օ՛րով ի գեղմանց մերկացեալ խաշանց թըռի գոլ պառակ.

Ելլ հորիզոն ի հեռուստ պատի յարոյր շըրջանակ —

Խառնին կապուտակք երկնից և ջըրոյն:

— «Փոխել պարտ իցէ ըզծովքս ի ցամաք» — հարց ամպրոպն հրեղէն:

— Ո՛չ . — և նա կալաւ ի շունչ Եստուծոյ զիւր թըռիչս անդրէն:

Փ.

Օ՛րովակ, ուր բլուրք դայարագեղ

Խաղաղ յալիս ցոլեն մընչեն:

Եզինք և նետք և զուարճ՝ գեղգեղ

Օղապարաց անդ միշտ հընչեն: —

Լէր տաղաւար, մըսուր խաշանց.

Ի՛րնակք՝ որսորդ թըռչնոց, ձրկանց:

Եզատք, որոց նետք ազեղանց
Բ՛զկայծակունա ի վեզ կոչեն:

Երանցս, որ այսր յաճին թափառ՝

Երգել լինի օչինչ օդ վատ:

Մանկունք, աղջկունք յօրինեն պար

Ի ազեղնաւորք վառք ի ջոկատ:

Շուրջ ըզհրրոջն, յափն աւարդի՝

Քր ի սրղոսն մեղմի պարզի—

Քրագէս ոգիք՝ զորս յերագի

Աարձէ շըրջել այր յիւր ձակատ:

Առսանքն, ոյց լանջք իբր երենևայ

Եւ զեղաւորք, զինչ սիւզ խաղաղ՝

Հաղիւ զանձինս տեսեալ պղընձեայ

Ի հայելիս՝ իրնդան ի խաղ:

Հանգոյն նոցին, այլք խընդու թեանց

Ի ծոց, պըտղամբ սեակ մատանց

Կաթն ըսպիտակ կըթեն խտեանց

Ազատուցն, որ անդ կան ի մակաղ:

Եբք և կանայք հոլակերպեան

Լուզին ի խորշ լեղի անհուն:

Օտար ցեղիցս աստանդական

Ուր էր արդեօք երեկեան տուն:

Չայնք զօղանջման սուր ծընծգային:

Բնդ որ զամբիկըք վըրնջ տային:

Միշտ հեա ընդ հեա խառնել զային

Բնդ ազաղակ մեծի ծովուն:

Եւ վայր մի զտեղեաւն վարանեալ ամպրոպ « ան յս իցի » եհարց·
Ընգիաի մարդկան, ո՛ պատասխանի եա նրմա թէ « անց »:

(Ի յեղ—բոյս·)

Քարգմ. Ի Ղազվիսկանէ ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԻՍԵԱՆՏ·

